

ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Մենք, ներքոստորագրյալներս, որպես աշխարհի տարբեր ժողովուրդների քաղաքական ներկայացուցիչներ, ընդունելով, որ ամեն տղամարդ, կին և երեխա պետք է հնարվորություն ունենա ապրել իր կյանքը զերծ հիվանդության դաժանությունից, **ՍՈՒՅՆՈՎ ՀՌՉԱԿՈՒՄ ԵՆՔ.**

1. որ մարդկության պատմության մեջ տուբերկուլյոզից մահացել են ավելի շատ թվով մարդիկ, քան որևէ այլ վարակիչ հիվանդությունից, և այն շարունակում է մնալ տարեկան 1.5 միլիոն մարդկանց մահացության պատճառ, որ հաճախ տուժում են առավել խոցելի խմբերի ներկայացուցիչները, և որ այն պետք է լինի գլոբալ քաղաքական առաջնահերթություն.

2. որ տուբերկուլյոզին հակազդման գործընթացի ներկայիս մակարդակը չափազանց դանդաղ է, այնպես, որ հիվանդությունը կարող է դեռևս դարեր շարունակ սպառնալիք մնալ միլիոնավոր քաղաքացիների սոցիալական և տնտեսական բարեկեցության համար ամբողջ աշխարհում, և հիվանդության դեմ պայքարի գործընթացի արագացումը պետք է լինի բոլոր կառավարությունների հետաքրքրության առարկան.

3. որ դեղակայուն տուբերկուլյոզին հակազդման գործընթացը հավաքական ձախողում է արձանագրում` հաճախ բուժման անտանելի բեռ դառնալով հիվանդների համար, և սպառնում է հիվանդության դեմ պայքարի առաջընթացին միլիոնավոր կյանքերի ծանր գնով, և որ այն պետք է անհապաղ գործողությունների ուշադրության կենտրոնում լինի.

4. որ տուբերկուլյոզի բուժման ընթացիկ դեղամիջոցները, պատվաստանյութերը եւ ախտորոշման մեթոդները բավարար չեն, և որ տուբերկուլյոզի դեղամիջոցների զարգացման առևտրային շուկան ձախողվել է.

5. որ հիվանդները գտնվում են տուբերկուլյոզի եռակի բեռի տակ` համադրելով հիվանդության առողջությանը հասցնող քայքայիչ ազդեցությունը, բուժման ծանր բեռը, ինչպես նաև խարանով և վախով պայմանավորված սոցիալական մեկուսացումը, և որ այս խնդիրները ամբողջականորեն պետք է լուծում ստանան ազգային առողջապահական ծրագրերի կողմից.

6. որ տուբերկուլյոզով համավարակները, ինչպիսիք են ՄԻԱՎ-ը եւ շաքարախտը խորացնում են խնդիրները, որոնց բախվում են հիվանդները բուժման ընթացքում` խոչընդոտելով հիվանդության տեմպերը նվազեցնելու ջանքերին, և մեծացնելով տուբերկուլյոզով պայմանավորված մահացության և հիվանդացության դեպքերը, և որ առողջապահական համակարգերը պետք է ներդնեն ծրագրեր առանցքային համավարակների համար.

Մենք, հետեւաբար, պարտավորվում ենք կիրառել մեր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները, կոչ անելու մեր կառավարություններին կայուն գործողությունների, ապահովել անհրաժեշտ միջազգային և տեղական ռեսուրսներով՝ պայքարելու տուբերկուլյոզի դեմ, և պնդել, որպեսզի հիվանդության դեմ պայքարը առաջնահերթ լինի քաղաքական օրակարգերում, մասնավորապես.

7. պահանջել, որ յուրաքանչյուր հիվանդի համար՝ անկախ նրանից, թե ովքեր են, անկախ բնակության վայրից կամ վճարելու կարողությունից, հասանելի լինի արագ, ճշգրիտ ախտորոշումը և բարձրորակ բուժումը, և որ տուբերկուլյոզի ախտորոշումը և բուժումը երբեք պատճառ չլինի հիվանդների կամ նրանց ընտանիքների աղքատացման.

8. կոչ անել հետազոտությունների և զարգացման մոդելի ձևավորման, որը պայմանավորված կլինի հանրային առողջապահության կարիքով, կաջակցի և կընդլայնի ներկայիս խիստ անհրաժեշտ նոր դեղամիջոցների, ախտորոշումների և պատվաստանյութերի անհրաժեշտ քանակների կանխատեսումները՝ ապահովելով, որ նոր բուժումները հասանելի և մատչելի լինեն դրանց կարիքը ունեցող հիվանդների համար.

9. պնդել, որ հիվանդները եւ խոցելի խմբերը ներգրավված լինեն հիվանդության հակազդմանն ուղղված գործընթացներում, աջակցել համայնքների եւ քաղաքացիական հասարակության խմբերի ներգրավմանը տուբերկուլյոզի կանխարգելման, հայտնաբերման և բուժման բոլոր ասպեկտներում՝ վերացնելով խարանը և ուժեղացնելով հիվանդներին ձայնը համաճարակի հակազդման գործընթացում.

Եվ այս առումով ՄԵՆՔ ՍՈՒՅՆՈՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ենք ստեղծել նոր գլոբալ խորհրդարանական աջակցող խումբ, ուժեղացնելու տուբերկուլյոզի համաճարակի դեմ պայքարի արդյունավետությունը, աշխատելով պաշտոնական կազմակերպությունների՝ ներառյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության, UNITAID-ի, Գլոբալ հիմնադրամի, "Կանգնեցնենք տուբերկուլյոզը" ընկերության, Միության և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագրի, ինչպես նաև ոչ պետական հասարակական կազմակերպությունների հետ ողջ աշխարհում, հասնելով քաղաքական և աշխարհագրական բաժանման, ստանձնելով պատրավորություններ մեր սեփական երկրներում և դրանից դուրս՝ դրանով իսկ ապահովելով տուբերկուլյոզի համաճարակի կանխումը հետագա սերունդներում: